ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«16» 07 2010թ.
N: 03/06.1/2672-10

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ի նախագահ
պարոն Վ. Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան.

ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված՝ 06.07.2010թ. (մարզպետարանում գրանցված 09.07.2010թ. N:5577-10) Ձեր հարցմանը ի պատասխան հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 27-ի N:422 որոշմամբ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի, տիրազուրկ (լքված) անշարժ գույքի հաշվառման» կարգի հաստատումից հետո ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնցով կանոնակարգվել է նշված հարաբերությունները:

Ներկայումս ինքնակամ զբաղեցված հողամասերին և ինքնակամ կառույցներին առնչվող գործառույթներն իրականացվում են ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N731-Ն որոշմամբ հաստատված՝ «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման» և ՀՀ կառավարության 2006թ մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված՝ «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգերի համաձայն:

Քննարկվող գործառույթները մարզպետներն իրականացնում են համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում: Տեղեկացնում ենք, որ ՀՀ Շիրակի մարզի այդ տարածքներում ինքնակամ հողօգտագործման և կառուցապատումների դեպքեր չեն արձանագրվել:

Համայնքների վարչական սահմաններում՝ օրենսդրության համաձայն, վերը նշված գործառույթներն իրականացնում են համայնքների ղեկավարները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորոբաժանումների հետ համատեղ:

Ելնելով ներկայացված հանգամանքներից, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջի համաձայն՝ տեղեկացնում ենք, որ Ձեր հարցման մեջ նշված տեղեկատվության համար Դուք պետք է դիմեք համայնքների ղեկավարներին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներին:

Խ. Պողոսյան

Կատ՝ Ա.Մարգարյան
Հեռ. /0312 3-55-39/
Լ.Դավթյան
Հեռ. /0312 3-67-51/